ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

**«Հաստատում եմ»**
**«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ**
**պետական բժշկական քոլեջի**
**տնօրինական խորհրդի նախագահ՝**

_____ **Ռ. Սարգսյան**

**« 13» 02. 2026թ**

# ՈՒՍԱՆՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՔԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի պետական բժշկական քոլեջում ուսանողի հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու գնահատման ցուցանիշները:
2. Փաստաթուղթը կազմելիս հիմք են ընդունվել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը», Քոլեջի կանոնադրությունը, «Ուսանողների ներքին կարգապահական կանոնները»:
3. Յուրաքանչյուր կիսամյակի և տարվա վերջին կուրսղեկը, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը, Ուսխորհրդի նախագահը՝ քոլեջի մանկավարժական և վարչական աշխատակազմի անդամների կարծիքի հիման վրա, սույն կանոնակարգով

գնահատում են ուսանողին, համաձայն հավելված 1, 2 և 3 -ի և ներկայացնում ուսումնական մաս, որտեղ ստացված տվյալները միջինացվում են:

## 2. ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1. Մասնակցությունը ներքոլեջային միջոցառումներին (0.2մ.), ուսանողական հավաքներին (0.2մ.), արտաքոլեջային հասարակական աշխատանքներին (0.2մ.), մշակութային իրադարձություններին (0.2մ.), շաբաթօրյակներին (0.2մ.): /ընդհ. 1մ/ *(Ծանոթագրություն. բնագրում առկա են «0.21.» և «շարաթօրյակներին» փառասխալները)*:
2. Ձեկույցները (0.2մ.), ռեֆերատները (0.2մ.), հրատարակած աշխատանքները (0.2մ.), անհատական աշխատանքները (0.2մ.), ինքնուրույն աշխատանքները (0.2մ.): /ընդհ. 1մ/
3. Մասնակցությունը միջքոլեջային (0.2մ.), քաղաքային և հանրապետական (0.2մ.) և միջազգային մրցույթներին (0.2մ.), օլիմպիադաներին (0.2մ.), ուսանողական գիտական նստաշրջաններին (0.2մ.): /ընդհ. 1մ/
4. Համագործակցությունը հասարակական (0.2մ.), քաղաքացիական (0.2մ.), մշակութային (0.2մ.), գիտական (0.2մ.), սոցիալական (0.2մ.) կազմակերպությունների հետ: /ընդհ. 1մ/
5. Այլ ստեղծագործական նախաձեռնությունները քոլեջի հայեցողությամբ, այդ թվում գաղափարների ներկայացում (0.2մ.), քոլեջի բարելավման ծրագրերի առաջարկություն (0.2մ.), թեմատիկ միջոցառումների անցկացման առաջարկություն (0.2մ.), ձեռքի աշխատանքների ներկայացման առաջարկություն (0.2մ.), հմտությունների կիրառում (0.2մ.): /ընդհ. 1մ/

## 3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ

Ուսանողների պատշաճ վարքագիծն ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների պահպանումն է: Ուսանողների պատշաճ վարքագիծը բնութագրող ցուցանիշներ են՝

1. Ակտիվ հաճախելիություն (0.2մ.), տնային առաջադրանքների կատարում (0.2մ.), դասապրոցեսին ակտիվ մասնակցություն (0.2մ.), թեմային առնչվող հետաքրքիր տեղեկատվության փոխանցում (0.2մ.), ուշադրության կենտրոնացման ցուցաբերում դասապրոցեսի ընթացքում (0.2մ.): /ընդհ. 1մ/ *(Ծանոթագրություն. բնագրում առկա է «կենտրոցման» փառասխալը)*:
2. Հարգալից վերաբերմունքի դրսևորում (0.2մ.), քոլեջի ներքին կարգապահական կանոնների հետևում (0.2մ.), վերջին կիսամյակում կարգապահական տույժի բացակայություն (0.2մ.),

պատասխանատվության զգացում (0.2մ.), ուսանողների և քոլեջի անձնակազմի հետ առողջ հարաբերությունների ստեղծում (0.2մ.): /ընդհ. 1մ/

3. Խնամքով վերաբերմունք քոլեջի սեփականությանը՝ գույքի անվնաս օգտագործում (0.2մ.), գրքերի խնամքով օգտագործում (0.2մ.), ուսումնական ձեռնարկների ժամանակին հանձնում (0.2մ.), սարքավորումների անվնաս և խնամքով օգտագործում (0.2մ.), անվտանգության նորմերի պահպանում (0.2մ.): /ընդհ. 1մ/
4. Կամավոր աշխատանքների կատարում (0.2մ.), զարգացվածության բարձր աստիճան (0.2մ.), նախասիրությունների լայն շրջանակ (0.2մ.), մասնագիտական գիտելիքների տիրապետում (0.2մ.), անձնային բարձր հատկանիշներ (0.2մ.): /ընդհ. 1մ/
5. Ուսումնական գործընթացի մոտիվացիայի ցուցաբերում (0.2մ.), մասնագիտական գրականության հետ աշխատելու կարողություն (0.2մ.), կոնֆլիկտային իրավիճակների գրագետ հարթման ունակություն (0.2մ.), ինքնակազմակերպվածության դրսևորում (0.2մ.), անհրաժեշտ իրավիճակներում օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն (0.2մ.): /ընդհ. 1մ/ *(Ծանոթագրություն. բնագրում առկա է «0.28.» տառասխալը)*:

## 4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

### 4.1. Գնահատման փուլերը և կազմակերպումը:

1. Յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտին նախորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում կուրսղեկը, դասախոսական կազմը և Ուսանողական խորհրդի ներկայացուցիչն իրականացնում են ուսանողների հասարակական ակտիվության և վարքագծի ընթացիկ ցուցանիշների ամփոփում:
2. Լրացված գնահատման թերթիկները (Հավելվածներ 1, 2, 3) ստորագրվում են պատասխանատուների կողմից և ներկայացվում են Ուսումնական մաս՝ էլեկտրոնային տվյալների բազայում մուտքագրելու և միջինացված վերջնական միավորը հաշվարկելու նպատակով:
3. Հաշվարկված վերջնական միավորները վավերացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հասանելի են դառնում ուսանողին (անհատական ծանուցման կամ քոլեջի ներքին տեղեկատվական համակարգի միջոցով)՝ ապահովելով հետադարձ կապ և խթանելով ուսանողի ինքնակատարելագործումը:

### 4.2. Արդյունքների դասակարգումը և խրախուսման/աջակցության մեխանիզմները:

Գնահատման արդյունքներն արտահայտվում են 0-ից 5 միավորի միջակայքում (ըստ սույն կարգի 2-րդ և 3-րդ բաժինների ցուցանիշների) և հիմք են հանդիսանում հետևյալ գործընթացների համար.

- **Գերազանց մակարդակ (4.5 - 5.0 միավոր):** Ուսանողները քոլեջի Մանկավարժական խորհրդի որոշմամբ ներկայացվում են բարոյական և նյութական խրախուսման՝

- ❖ Քոլեջի Գովասանագրի կամ Պատվոգրի շնորհում,
- ❖ ՀՀ օրենսդրությամբ և Քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգով ուսանողական նպաստների կամ անվանական գեղչերի/կրթաթոշակների տրամադրման գործընթացում առաջնահերթության սահմանում (հավասար ՄՈԳ-ի պայմաններում) :

➢ **Բավարար/միջին մակարդակ (3.0 - 4.4 միավոր)**: Դիտարկվում է որպես համապատասխանություն քոլեջի ներքին կարգապահական և հասարակական նորմերին: Ուսանողին խորհուրդ է տրվում ակտիվացնել մասնակցությունը հետազոտական կամ կամավորական աշխատանքներին:

➢ **Ցածր/ռիսկային մակարդակ (3.0 միավորից ցածր)**: Արձանագրվելու դեպքում կիրառվում են աջակցության և կանխարգելման հետևյալ մեխանիզմները.

- ❖ Կուրսղեկի և Ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպվում է անհատական խորհրդատվություն՝ ուսանողի ցածր ակտիվության կամ վարքագծային խնդիրների պատճառները վերհանելու նպատակով:
- ❖ Կազմվում է անհատական բարելավման պլան, իսկ անհրաժեշտության դեպքում (ներքին կարգապահական կանոնների պարբերական խախտման պարագայում) հարցը ներկայացվում է տնօրինության քննարկմանը՝ ՀՀ օրենսդրությամբ

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

### 5.1. Ներքին վերահսկողություն և օբյեկտիվության ապահովում:

1. Սույն ընթացակարգի պահանջների պահպանման, գնահատման թերթիկների լրացման ճշգրտության և սահմանված ժամկետների հետևողականության վերահսկողությունն իրականացվում է Մեթոդիստի և Քոլեջի Որակի ապահովման (ՈԱ) պատասխանատուի կողմից:
2. ՈԱ պատասխանատուն իրավասու է իրականացնելու գնահատման հիմքերի (հարցումների արդյունքներ, միջոցառումների արձանագրություններ, տվյալների բազաներ) ընտրանքային աուդիտ՝ ապահովելով գնահատման օբյեկտիվությունը, անկողմնակալությունն ու բացառելով շահերի բախումը:
3. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին Ուսումնական մասը և ՈԱ պատասխանատուն համատեղ պատրաստում են ուսանողների հասարակական ակտիվության և վարքագծի գնահատման արդյունքների վերլուծական հաշվետվություն, որը ներկայացվում է Քոլեջի Մանկավարժական խորհրդի քննարկմանը՝ ընթացակարգի հետագա բարելավման նպատակով (ՊԻՍԲ շրջափուլի տրամաբանությամբ):

### 5.2. Բողոքարկման մեխանիզմները:

1. Գնահատման վերջնական արդյունքների (միավորների) հետ անհամաձայնության դեպքում ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու արդյունքների պաշտոնական ծանուցումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Քոլեջի տնօրենին:
2. Ուսանողի դիմումի հիման վրա, տնօրենի հրամանով, 2 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորվում է ժամանակավոր ապելյացիոն հանձնաժողով, որի կազմում ներգրավվում են վարչական կազմի ներկայացուցիչներ, տվյալ կուրսում չդասավանդող անկախ դասախոսներ և Ուսանողական խորհրդի անդամ (ով չի հանդիսանում տվյալ կուրսի ուսանող):
3. Հանձնաժողովը վերանայում է գնահատման թերթիկները, անհրաժեշտության դեպքում լսում է կուրսղեկին ու դիմումատու ուսանողին, և կայացնում է վերջնական որոշում՝ միավորը նույնը թողնելու կամ փոփոխելու վերաբերյալ, ինչն արձանագրվում և հաստատվում է տնօրենի կողմից: